ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 2

ՀՀ ՏԿԵՆ կարիքների համար կազմակերպված «ՏԿԵՆ-ԳՀԾՁԲ-26/23» ծածկագրով գնման ընթացակարգի՝ գնահատող հանձնաժողովի հայտերի բացման և գնահատման նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ

մեկնարկ՝ 30.03.2026թ.
ժամը 15:00
ավարտ՝ 16.04.2026թ.
ժամը 11:35

Գնահատող հանձնաժողովի կազմը՝

Հանձնաժողովի նախագահ՝

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության նախարարի տեղակալ	Ասատուր Վարդանյան

Հանձնաժողովի անդամներ՝

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ընդերքօգտագործման դրավունքի ձևավորման և կենտրոնացված մատյանի վարման բաժնի պետ, ընդերքի վարչության պետի պարտականությունները կատարող	Կարեն Գասպարյան
ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ընդերքի վարչության ընդերքօգտագործման իրավունքի ձևավորման և կենտրոնացված մատյանի վարման բաժնի գլխավոր մասնագետ	Գևորգ Բալումյան
ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ընդերքի վարչության ընդերքաբանական փորձաքննության բաժնի գլխավոր մասնագետ	Դավիթ Սարգսյան
ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության իրավաբանական վարչության օրենսդրության բաժնի գլխավոր իրավախորհրդատու	Սիրանուշ Աբրահամյան

Հանձնաժողովի քարտուղար՝

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության գնումների համակարգման և կազմատնտեսական վարչության գնումների համակարգման բաժնի պետ	Զանուշ Հայրապետյան

«ՏԿԵՆ-ԳՀԾՁԲ-26/23» ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) հայտերի բացման և գնահատման նիստի օրակարգը

1. Տեղեկատվություն գնման հայտով սահմանված՝ գնվելիք ծառայությունների վերաբերյալ:
2. Տեղեկություն՝ Ընթացակարգի հայտերի բացման վայրի, օրվա և ժամի մասին:
3. Տեղեկություն Armeps (armeps.am) էլեկտրոնային համակարգում հայտ ներկայացրած մասնակցի վերաբերյալ:
4. Տվյալներ՝ Ընթացակարգի էլեկտրոնային հայտը կազմելու և ներկայացնելու՝ Ընթացակարգի հրավերով (այսուհետ՝ Հրավեր) սահմանված պահանջներին համապատասխան լինելու մասին:
5. Տվյալներ՝ Ընթացակարգին էլեկտրոնային հայտ ներկայացրած մասնակցի առաջարկած գնի մասին:
6. Տեղեկատվություն՝ գնի նվազեցման շուրջ հրավիրված բանակցությունների վերաբերյալ:
7. Տեղեկատվություն՝ Ընթացակարգի հրավերով սահմանված ծառայությունների բնութագրերի վերաբերյալ հիմնավորումների, դրավերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին:
8. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի գնահատման արդյունքների հաստատման (մրցույթի արդյունքների ամփոփման) մասին:

1. Տեղեկատվություն՝ գնման հայտով սահմանված գնվելիք ծառայությունների վերաբերյալ

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 1-ին ենթակետով՝ հանձնաժողովի նախագահը նիստը հայտարարեց բացված և հրապարակեց գնման հայտով սահմանված՝ սույն ընթացակարգի շրջանակում գնվելիք ծառայությունների գնման գները.

Չափաբաժնի		*Չափաբաժնի անվանումը*
համարը	*գնման գինը*	
1	1 500 000	Արաքս գետի ողողահունում ավազի հանքավայրի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի փորձաքննության ծառայություններ
2	1 500 000	Արաքս գետի Արմավիր ջրանցքի վրա պարզարանի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի փորձաքննության ծառայություններ

2. Տեղեկություն՝ Ընթացակարգի հայտերի բացման վայրի, օրվա և ժամի մասին

2.1 Ընթացակարգի հայտը Armeps (www.armeps.am) էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով բացվել է հրավերով սահմանված ժամկետում՝ հայտերի ներկայացման վերջնաժամկետին՝ 2026 թվականի մարտի 30-ին, ժամը 15:00-ին:

3. Տեղեկություն Armeps (armeps.am) էլեկտրոնային համակարգում հայտ ներկայացրած մասնակցի վերաբերյալ

3.1 Սահմանված կարգով ներկայացվել է 1 հայտ, որն ընդունվել է Armeps (armeps.am) էլեկտրոնային համակարգի կողմից և համարվել հետագա գնահատման համար ընդունելի:

3.2 Ընթացակարգի շրջանակներում հայտ ներկայացրած մասնակցի տվյալները՝ անվանումը, գտնվելու կամ բնակության վայրը, կապի միջոցները՝

№	Մասնակցի անվանումը	Գործունեության հասցեն	ՀՎՀՀ	Էլեկտրոնային հասցե, հեռախոսահամար
1	«ՀՀ նախագծերի պետական արտագերատեսչական փորձաքննություն» ՓԲԸ	ՀՀ ք. Երևան, Կոմիտասի 54բ	01508665	ekspertizaproektov@mail.ru Հեռ. +374 93 80 00 09

4. Տվյալներ՝ Ընթացակարգի էլեկտրոնային հայտը կազմելու և ներկայացնելու՝ Հրավերով սահմանված պահանջներին համապատասխան լինելու մասին:

4.1 Մասնակցի էլեկտրոնային հայտում հրավերով պահանջվող /նախատեսված/ փաստաթղթերն առկա են և համապատասխանում են Ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին (պահանջներին):

5. Տվյալներ՝ Ընթացակարգին էլեկտրոնային հայտ ներկայացրած մասնակցի առաջարկած գնի մասին

5.1 Ընթացակարգի շրջանակներում յուրաքանչյուր մասնակցի կողմից ներկայացված գնային առաջարկը.

Չափաբաժին 1: Արաքս գետի ողողահունում ավազի հանքավայրի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի փորձաքննության ծառայություններ

№	Մասնակցի անվանումը	Արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը)	ԱԱՀ	Ընդհանուր գինը
1	*2*	*3*	*4*	*5*
1	«ՀՀ նախագծերի պետական արտագերատեսչական փորձաքննություն» ՓԲԸ	1 250 000	250 000	1 500 000

Չափաբաժին 2: Արաքս գետի Արմավիր ջրանցքի վրա պարզարանի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի փորձաքննության ծառայություններ

№	Մասնակցի անվանումը	Արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը)	ԱԱՀ	Ընդհանուր գինը
1	2	3	4	5
1	«ՀՀ նախագծերի պետական արտագերատեսչական փորձաքննություն» ՓԲԸ	1 250 000	250 000	1 500 000

5.2 Մասնակցի գնային առաջարկի հաշվարկման ճշտությունը /հայտով ներկայացված գնային առաջարկի թվերով և տառերով արտահայտված տվյալների համապատասխանությունը/, ինչպես նաև հաշվարկման թվաբանական ճշտությունը համապատասխանում են /ճիշտ են/:

Գնահատող հանձնաժողովը որոշեց.

1) Ղեկավարվելով «Գնումների մասին» օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով 2026 թվականի ապրիլի 16-ին ժամը 11:30 Հրավերի պահանջներին համապատասխանող գնահատված հայտ ներկայացրած Ընթացակարգի միակ մասնակից «ՀՀ նախագծերի պետական արտագերատեսչական փորձաքննություն» ՓԲ ընկերությանը հրավիրել Ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով գնի նվազեցման շուրջ բանակցությունների, անցկացման վայրը՝ ՀՀ ք. Երևան, Կառավարական տուն 3, 639 սենյակ:

2) Գնահատող հանձնաժողովի նիստը վերսկսել ս.թ. ապրիլի 16-ին՝ ժամը 11:30-ին:

Որոշումն ընդունվել է՝ կողմ- 5, դեմ-0

6. Տեղեկատվություն՝ գնի նվազեցման շուրջ հրավիրված բանակցությունների վերաբերյալ

6.1 Ընդունել ի գիտություն, որ սահմանված ժամկետում մասնակիցը չի ներկայացել գնի նվազեցման շուրջ բանակցություններին:

7. Տեղեկատվություն՝ Ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերը վերաբերյալ հիմնավորումների, հրավերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին

7.1 «Գնումների մասին» օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից՝ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի վերաբերյալ հարցումներ չեն ստացվել:

7.2 Սույն ընթացակարգի վերաբերյալ հիմնավորումներ չեն տրվել:

8. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի գնահատման արդյունքների հաստատման (մրցույթի արդյունքների ամփոփման) մասին:

Գնահատող հանձնաժողովը որոշեց.

8.1 Ղեկավարվելով «Գնումների մասին» օրենքի 34-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով, ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետով և հիմք ընդունելով հայտի գնահատման արդյունքները Ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից ճանաչել՝ «ՀՀ նախագծերի պետական արտագերատեսչական փորձաքննություն» ՓԲԸ-ին:

8.2 Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետը՝ անգործության ժամկետ չսահմանել:

8.3 Հաստատել պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության տեքստը:

8.4 Ընթացակարգի ընտրված մասնակցին ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ՝ հաշվի առնելով «Գնումների մասին» օրենքի 10-րդ և 36-րդ հոդվածների պահանջները:

8.5 Պայմանագիր չկնքելու դեպքում Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրն ու ժամը սահմանել այդ իրադարձության հայտնի լինելու օրվան հաջորդող աշխատանքային օրը՝ ժամը 12:00-ն:

Որոշումն ընդունվել է՝ կողմ- 5 դեմ-0

Հանձնաժողովի անդամների ստորագրությունները՝

Հանձնաժողովի նախագահ՝	Ասատուր Վարդանյան	.....
Հանձնաժողովի անդամներ՝	Կարեն Գասպարյան	.....
	Գևորգ Բալումյան	.....
	Դավիթ Սարգսյան	.....
	Սիրանուշ Աբրահամյան	.....
Քարտուղար՝	Զանուշ Հայրապետյան	.....

[i] Սույն գնումն իրականացվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի, 15-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ կետի հիման վրա